ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 11
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության
մարզային հանձնաժողովի նիստի

19.12.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամներ, Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենը, Սպիտակ համայնքի ներկայացուցիչներ, ծրագրի տարածաշրջանային խորհրդատուն:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջներին համապատասխան նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի կողմից իրականացված «Գեղասարի գերեզմանատան ցանկապատում և տարածքների բարեկարգում» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:
/Զեկ.՝ Գեղասար համայնքի ղեկավար Վարազդատ Գրիգորյան,
Սպիտակի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի
խորհրդատու Գայանե Բոջուկյան,
Սպիտակի ԶՏԿ-ի տնօրեն Գագիկ Ստեփանյան/

3. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի կողմից իրականացված «Սպիտակ համայնքի ճանապարհների հարակից տարածքների բարեկարգման օժանդակ աշխատանքներ» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:
/Զեկ.՝ Սպիտակի համայնքապետարանի ծրագրի պատասխանատու Արման Ավետիսյան, Սպիտակի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի
խորհրդատու Գայանե Բոջուկյան,
Սպիտակի ԶՏԿ-ի տնօրեն Գագիկ Ստեփանյան/

4. Այլ հարցեր:

Հանձնաժողովը ո ր ո շ ե ց՝
Ա ր ձ ա ն ա գ ր ե լ՝
1. ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի կողմից իրականացված «Գեղասարի գերեզմանատան ցանկապատում և տարածքների բարեկարգում» ծրագրի ավարտը:

2. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի կողմից իրականացված «Սպիտակ համայնքի ճանապարհների հարակից տարածքների բարեկարգման օժանդակ աշխատանքներ» ծրագրի ավարտը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

1. Ներկայացնել ավարտված ծրագրերի մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ:

2. Համապատասխան գրություն նախապատրաստել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/